ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ

6 հարցերի կարճ պատասխաններ

1 Ի՞նչ ժամկետում է ընդունվում ժառանգությունը:

Ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգատուի մահվան օրվանից **վեց ամսվա** ընթացքում:

2 Որո՞նք են ժառանգությունը ընդունելու եղանակները:

Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունը **փաստացի տիրապետելու** կամ ժառանգության բացման վայրի **նոտարին** ժառանգությունն ընդունելու մասին **դիմում ներկայացնելով:**

3 Արդյո՞ք հնարավոր է ընդունել ժառանգությունը վեց ամսյա ժամկետը բաց թողնելուց հետո:

Այո՛, դատարան դիմում ներկայացնելով՝ խնդրելով հարգելի համարել ժամկետի բացթողումը, եթե ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգատուի մահվան մասին և դատարան է դիմտել ժառանգատուի մահվան մասին իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում:

Ժառանգը կարող է նաև **առանց դատարան դիմելու** ժառանգությունն ընդունել վեց ամսյա ժամկետի ավարտից հետո, եթե **առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը:**



4 Արդյո՞ք ժառանգության ընդունումը պարտադիր է ժառանգի համար:

Ո՛չ, ժառանգն իրավունք ունի հրաժարվելու ժառանգությունից նույն վեց ամսյա ժամկետում, ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը, նոտարին դիմում ներկայացնելու միջոցով: Ընդ որում, ժառանգությունը **չընդունելը** հանգեցնում է նույն հետևանքներին, ինչը **ժառանգությունից հրաժարվելն** առանց այն անձին նշելու, հօգուտ որի նա հրաժարվել է ժառանգությունից:

5 Ժառանգությունից հրաժարվելուց հետո ժառանգը կարո՞ղ է մտափոխվել և ընդունել ժառանգությունը:

Ո՛չ, ժառանգությունից հրաժարվելը վերջնական է, այն չի կարող վերացվել կամ հետ կանչվել:

6 Ի՞նչ է լինում ժառանգման ենթակա գույքի հետ, երբ ժառանգը հրաժարվում է ժառանգությունից:

Եթե նա **հրաժարվում է հօգուտ այլ ժառանգի,** ապա իրեն հասանելիք բաժինը ժառանգում է այդ ժառանգը: Սակայն եթե նա որևէ **անձի չի նշում,** հօգուտ որի հրաժարվում է ժառանգությունից, ապա իր բաժինը հավասարապես անցնում է մյուս ժառանգներին: